600.0398.24.10.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

24 հոկտեմբերի 2018 թվականի №398Ա

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի №269Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի հոկտեմբերի 2-ին «ՇՈՒՄԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 2 տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 16-ի №269Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0551 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) համաձայն Ընկերության դիմումի՝ «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանում որևէ աշխատանք չի իրականացվել,

գ) Ընկերությունը 4-րդ անգամ է կառուցման ժամանակահատվածի երկարաձգման հայտ ներկայացնում Հանձնաժողով,

դ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և

պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնհինգ ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 16-ի «ՇՈՒՄԵՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №269Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0551 լիցենզիայով ամրագրված «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2018 թվականի հոկտեմբերի 29-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի հունվարի 29-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ №0551 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Ստեփանավան-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 29-ի №1913 գրությամբ Հանձնաժողով ներկայացված բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր դրամ գումարից վեց հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր հիսուն դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել մեկ միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2020 թվականի մարտի 14-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 29-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
24 հոկտեմբերի 2018թ.